# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի  Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Վ Ա Յ Ո Ց  Ձ Ո Ր Ի
# Մ Ա Ր Զ Պ Ե Տ

---

*<<14 >> << հունվար >> 2015 թ* N 3
*ք. Եղեգնաձոր*

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ (ՀԱՏՈՒԿ) ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՆՎՃԱՐ ԿԱՄ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ԹԻՎ 10 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N318-Ն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետով հաստատված N2 հավելվածի 9-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով,*

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ  Ե Մ**

1. *Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում բժշկական ցուցումների առկայության դեպքում, համապատասխան բժիշկ-մասնագետների կողմից տրված եզրակացության հիման վրա, բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու նպատակով ստեղծել մարզային նոր հանձնաժողով համաձայն հավելվածի:*
2. *Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2014 թվականի փետրվարի 10-ի <<Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 10 կարգադրությունը:*
3. *Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:*

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2015 թվականի հունվարի 14-ի
N 3 կարգադրության

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում բժշկական ցուցումների առկայության դեպքում, համապատասխան բժիշկ-մասնագետների կողմից տրված եզրակացության հիման վրա, բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու նպատակով ստեղծված մարզային հանձնաժողովի կազմը՝
Հանձնաժողովի նախագահ՝

1.Հարություն Սարգսյան - Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետ

Անդամներ՝
2.Խաչիկ Գևորգյան - Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

3.Սամվել Շահբազյան - Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ

4.Անահիտ Կարապետյան - <<Եղեգնաձորի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն

5.Արմեն Մարգարյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի Վայքի սոցիալական ծառայության տարածքային գործակալության պետ

6.Նեկտար Հովհաննիսյան - <<Հայ օգնության միություն>> Վայոց ձոր մարզային պատասխանատու

7.Ցողիկ Բաբայան - Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առաջատար մասնագետ /հանձնաժողովի քարտուղար/

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Կ.ՍԱՀԱԿՅԱՆ